

«ԷԴԻԹ ՊՐԻՆՏ» հրատարակչություն

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Մարիամ Դարբինյան

Ա. Հովհաննիսյանի հմ. 194 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Աիդա Խալաթյան

ԵՐԵՎԱՆ 2021

Բովանդակություն

Ներածություն

3

Գլուխ 1. Գնահատում

4

1. 1	Գնահատման հիմնական գործառույթները	4
1. 2	Ո՞ւմ և ինչի՞ն պետք է ծառայի գնահատումը	5
1. 3	Ի՞նչն ենք գնահատում և երբ ենք գնահատում	6
Գլուխ 2. Ընթացիկ գնահատում		7
2. 1	Ընթացիկ գնահատման հիմնական նպատակները, խնդիրները և գործառույթները	7
2. 2	Ընթացիկ գնահատման ձևերն ու ստուգման տեսակները	8
Գլուխ 3. Միավորային գնահատման իրագործման ընդունված տեսակները		9
3. 1	Բանավոր հարցում	9
3. 2	Գործնական աշխատանք	10
3. 3	Թեմատիկ աշխատանք	12
3. 4	Կիսամյակային ամփոփիչ աշխատանք	14
3. 5	Կիսամյակային և տարեկան գնահատականների ձևավորումը	15
Գլուխ 4. Ուսուցանող գնահատում		18
4. 1	Ուսուցանող աշխատանքների ձևեր ու տեսակներ	19
4. 2	Թեստ	27
4. 3	Հայտորոշում	29
4. 4	Գնահատման սանդղակ «Ռուբրիկ»	32
4. 5	Ուսումնական թղթապանակ	37
Եզրակացություն		39
Գրականության ցանկ		40

Ներածություն

Մարդ ձգտում է դեպի գիտելիքները, և հենց որ նրանում
մարում է գիտելիքների ծարավը, նա դադարում է մարդ լինելուց:
Ֆ. Նանսեն

Կյանքի արագընթաց փոփոխությունների, տեղեկատվության ծավալի բազմապատկման, կրթության նկատմամբ հասարակության պահանջկոտության մեծացման պայմաններում, մարդկությանը միշտ էլ հուզել են կրթության ու դաստիարակության խնդիրները: Ժամանակի հետ փոխվում են նաև այդ բնագավառի պահանջները, աշխատանքային մեթոդները և անխուսափելի են դառնում բարեփոխումները: Հանրակրթությունում ընթացող բարեփոխումների նպատակն է որակի բարելավումն ու ժամանակակից պահանջներին համապատասխանող գործունեության ապահովումը:

Կրթության որակի բարելավման խնդիրը միշտ արդիական է: Կրթության որակ ասելով հասկանում ենք կրթակարգով, պետական չափորոշիչով և ծրագրերով ներկայացվող պահանջներին սովորողի համապատասխանության աստիճանը:

Նշենք, որ հիմնականում կրթության որակով է պայմանավորված պետության, անհատի, հետևաբար և հասարակության վիճակն ու բարեկեցությունը: Կրթության նկատմամբ ձևական և մակերեսային վերաբերմունքը վնասում է թե՛ հասարակությանը, և թե՛ պետությանը:

Այդ խնդիրների լուծման ժամանակակից մոտեցումներում առանցքային դեր է վերագրվում հանրակրթությունում աշակերտի գիտելիքի, կարողությունների ու հմտությունների գնահատման և արժևորման համակարգերին:

Պետությունը իր հիմնական գործառույթն է համարում բովանդակության ընդհանուր պահանջների և սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների՝ չափորոշիչների սահմանումը: Այդ մոտեցման վրա է հիմնված Հայաստանի հանրակրթության պետական կրթակարգը: Բովանդակության բոլոր մակարդակներում ժամանակակից ուսուցչից գործուն մասնակցություն է պահանջվում: Վճռորոշ դեր ունենալով հաղորդվող բովանդակության գործում՝ ուսուցիչը պետք է փորձի բովանդակության մյուս երկու մակարդակները միմյանց համապատասխանեցնելու խնդիրը լուծել: Եթե նախկինում մշակված բովանդակությունը առարկայական ծրագրերն ու դասագրքերն էին, ապա այսօր դրանց ավելանում են չափորոշիչները: Այսինքն, խնդիր է դրվում ոչ թե սոսկ դասագրքի նյութը հաղորդել, այլ այնպես սովորեցնել, որ արդյունքում աշակերտի պատրաստվածության մակարդակը համապատասխան լինի չափորոշիչներին:

Այս համատեքստում կարևոր է ընթացիկ գնահատումների կանոնակարգված համակարգ ունենալը և այն ներդնելը, քանի որ ուսումնական ողջ գործընթացն ուղեկցվում է գնահատման համակարգի կիրառմամբ:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գնահատումն ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Գնահատմամբ պարզվում է յուրաքանչյուր սովորողի և դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը:

Գնահատման հիմնական նպատակն է սովորողի գիտելիքների մակարդակի, կարողությունների ու հմտությունների տիրապետման ստուգումը, արժեքային որակների ձևավորման ապահովումը և դրանց հիման վրա ուսումնական գործընթացի արդյունավետության, ուսման որակի բացահայտումն ու վերահսկումը:

Գնահատումը նպաստում է նաև սովորողի ինքնահաստատմանը և ինքնազարգացմանը: «Գնահատում » բառը կրթական համատեքստում կիրառության մեջ մտել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Կրթական գնահատումը լայն հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով: Նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերահսկման և բարելավման մեխանիզմ:

Սովորողների գնահատման նոր համակարգի մշակումը և կիրառությունը պետք է կատարվի առարկայական չափորոշիչների և ծրագրերի ներդրմանը զուգահեռ:

Գնահատման ներդրվող համակարգը պիտի հիմնվի **արդարության, հուսալիության, անկողմնակալության, հավաստիության, հիմնավորվածության, մատչելիության, թափանցիկության** սկզբունքների վրա և ապահովի համադրելիությունը միջազգայնորեն ընդունված գնահատման չափանիշներին:

Գնահատման հիմնական գործառույթներն են՝

1. Սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության գնահատումը, ինքնակրթության և ինքնագնահատման, կրթական մի աստիճանից մյուսին անցման հնարավորության ապահովումը, կրթության շարունակականության խրախուսումը:
2. Սովորողին ներկայացվող պահանջների կատարման, ուսումնական նյութի յուրացման աստիճանի բացահայտումը:
3. Դպրոցի գործունեության արդյունավետության բացահայտումը, ուսուցիչ-սովորող համագործակցային հարաբերությունների զարգացումը:
4. Սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակության և ծավալի ճշգրտումը:
5. Սովորողի անձնային որակների ձևավորման և վարքագծի բացահայտմանը նպաստելը, ինքնաճանաչողության ապահովումը:
6. Մանկավարժների վերապատրաստման և մասնագիտական աճի ապահովումը:
7. Չափորոշիչների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական այլ նյութերի, ուսուցման մեթոդների կատարելագործման հիմքերի ապահովումը:
8. Հանրակրթության բարեփոխման ուղղությունների հստակեցումը, բովանդակության արդիականացումն ու կրթական համակարգի համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին:
9. Սովորողի ուսումնական գործունեության արդյունքների որակավորումը:
10. Դպրոցի հանդեպ ծնողների, համայնքի, հանրության վստահության ձևավորումն ու ամրապնդումը:

Գնահատումը բացահայտում է նաև ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքները:

Ուժ և ինչի՞ն պետք է ծառայի գնահատումը

Աշակերտի համար գնահատականը պետք է խրախուսի, արձանագրի աճը, ուժեղ և թույլ կողմերը, հաջողություններն ու վրիպումները: Սովորողին ուղղված գնահատականը պետք է վերաբերի նրա կոնկրետ գործողություններին, արարքներին, գործունեության արդյունքներին, այլ ոչ թե անձին: Այն փաստը, որ սովորողը խնդիր չի կարողանում լուծել, դեռևս հիմք չէ դատողություններ անելու նրա մտավոր ընդունակությունների մասին:

Ուսուցչի համար այն պետք է աշխատանքը պլանավորելու, փոփոխություններն արձանագրելու, նպատակին հասնելու աստիճանը պարզելու, արդյունքը փաստելու միջոց լինի:

Ծնողի համար այն պետք է երեխայի առաջընթացն արձանագրելու, ինչպես նաև դաստիարակության ձևերի շուրջ մտորելու, դրանք ավելի ճկուն և բազմազան դարձնելու միջոց հանդիսանա:

Այլոց՝ շահագրգիռ կամ հետաքրքրված անձանց համար (մանկավարժական անձնակազմ և այլն) ուսումնական նյութի ազդեցությունը տեսնելու, երեխայի մասին տեղեկություններ ունենալու միջոց լինի:

Ի՞նչն ենք գնահատում

Գնահատման համակարգը պետք ներառի միջոցներ, որոնք կգնահատեն

- Գիտելիքներ
- Հմտություններ
- Դիրքորոշում
- Արժեքներ

Ե՞րբ ենք գնահատում

Ըստ ուսումնական գործընթացի նպատակի կիրառվում է.

-նախնական գնահատում՝ բացահայտվում է սովորողների պատրաստվածության աստիճանը, որն էլ օգնում է պլանավորել ուսուցման հետագա գործընթացը

-ընթացիկ գնահատում՝ ստուգվում է ուսումնական նյութի առանձին միավորի կամ դրա մի մասի յուրացման աստիճանը

-ամփոփիչ գնահատում՝ ստուգվում է ամբողջական թեմայի, դասընթացի առարկայի յուրացման աստիճանը

-պարտադիր ամփոփիչ գնահատում՝ ստուգվում են հիմնական և միջնակարգ դպրոցի շրջանավարտի ուսումնական գործունեության արդյունքները:

Ընթացիկ և ամփոփիչ գնահատումները դպրոցում կիրառվում են նաև սովորողի ուսումնական գործունեության արդյունքը որոկավորելու և դպրոցի մի աստիճանից մյուսին անցումն ապահովելու համար:

Գնահատման ի՞նչ ձևեր կարելի է կիրառել

/Ինչպես ենք գնահատում/

Գնահատումն իրականացվում է գրավոր և բանավոր:Այն կարող է լինել քանակական (արտահայտվի բալերով,թվանշաններով) կամ որակական: Քանակական և որակական գնահատումը հաճախ զուգակցվում է:

Գնահատման համար կիրառվում են հետևյալ միջոցները կամ գործիքները.

- հարցում
- առաջադրանքի կատարում /շարադրություն,թելադրություն. . . .
- հարցարան
- թեստ
- գնահատման սանդղակ
- ուսումնական թղթապանակ
- ստուգատես- ցուցադրություն և այլն

Ընթացիկ Գնահատում

Ընթացիկ գնահատումը հանրակրթության գնահատման համակարգի առաջնային և կարևոր մասն է:Դրա շնորհիվ պարզվում են սովորողների,ուսուցիչների և դպրոցների կողմից պետական,առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ընթացքը և արդյունքները,ուսուցման գործընթացում սովորողների և ուսուցիչների ձեռքբերումներն ու դժվարությունները:Ընթացիկ գնահատումը շարունակական տեղեկատվություն է ապահովում ուսուցման ընթացքն ուղղորդելու,դասավանդման և ուսումնառության որակը բարձրացնելու համար:

Ընթացիկ գնահատման հիմնական նպատակները,

խնդիրները և գործառույթները

Ուսումնական գործընթացի կազմակերպման ու վերահսկման բարեփոխված մոտեցումները և մեթոդները՝ սովորողների ընթացիկ գնահատման նոր համակարգի համար սահմանվում են հետևյալ առաջնային նպատակները.

1. Սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության ընթացքի բացահայտումը,

նրա ձեռքբերումների ու դժվարությունների արձանագրումը,հաշվառումը և վերլուծությունը

2. Կրթակարգով և պետական չափորոշիչներով ամրագրված հանրակրթության բովանդակային բաղադրիչների իրականացման բացահայտումը, փուլային ստուգումն ու գնահատումը:

Չանրակրթական դպրոցների սովորողների ընթացիկ գնահատման նպատակներից և սկզբունքներից բխում են հետևյալ առանցքային խնդիրները՝

1. Գնահատման տարբեր ձևերի և տեսակների համակարգված կիրառման միջոցով հնարավորություն տալ սովորողներին առավելագույնս ցուցաբերել իրենց գիտելիքները, կարողությունները և հմտությունները:

2. Գնահատման չափանիշների հստակեցման միջոցով բարելավել ուսուցման գործընթացի արդյունավետությունը:

3. Ուսուցանող գնահատման կանոնակարգման շնորհիվ ավելացնել սովորողների հետաքրքրությունն ուսուցանվող առարկաների նկատմամբ և բարձրացնել ուսումնառության արդյունավետությունը:

4. Նպաստել սովորողի անձնային որակների ձևավորմանն ու վարքագծի բացահայտմանը խթանել նրա ինքնաճանաչման, ինքնագարգացման և ինքնագնահատման կարողությունների զարգացումը:

5. Գնահատման նոր համակարգի ներդրման շնորհիվ բարձրացնել ուսուցիչների պատասխանատվության և մասնագիտական պատրաստվածության աստիճանը:

Ընթացիկ գնահատման նոր համակարգի համար ամրագրվում են հետևյալ կարևոր գործառույթները.

ա. ճշգրտել սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակությունն ու ծավալը, խթանել յուրաքանչյուր սովորողի ուսումնական ակտիվությունը,

բ. հայտորոշել ուսուցման ընթացքը և արդյունքները,

գ. շաղկապել ուսուցումը ուսումնառության հետ,

դ. փոխադարձ կապ ապահովել սովորողի, նրա ծնողի հետ,

ե. հաշվառել սովորողի առաջադիմության ընթացքը,

զ. վերահսկել ուսուցման գործընթացը և արդյունքները:

Ընթացիկ գնահատման ձևերն ու ստուգման տեսակները

Սովորողների առաջադիմության ընթացիկ գնահատման համակարգը բաղկացած է երկու իրար փոխլրացնող ձևերից՝

ա) **ուսուցանող գնահատում**, որն իրականացվում է առանց գնահատականը գրանցելու և, սովորաբար, ուղեկցվում է ուսումնական առաջադրանքի կատարման կամ նյութի յուրացման վերաբերյալ ուսուցչի կողմից սովորողին արված առաջարկություններով, դիտողություններով կամ մեկնաբանություններով,

բ) **միավորային գնահատում**, որը կիրառվում է սովորողի կողմից ամբողջական թեմայի յուրացման աստիճանը ստուգելիս, և որն իրականացվում է սովորողի գնահատականը գրանցելու-հաշվառելու միջոցով:

Միավորային գնահատումն իրականացվում է ուսումնական նյութի որոշակի մասն ուսումնասիրելուց հետո և ունի վերահսկող գործառույթ: Ուսուցանող գնահատումը իրականացվում է ուսումնական նյութի յուրացման ընթացքում, հետապնդում է սովորողի առաջադիմության բարձրացման և կրթության որակի բարելավման նպատակ:

Գործածության են երաշխավորվում ստուգման ու հայտորոշման հետևյալ ձևերն ու տեսակները՝ բանավոր հարցում, թեմատիկ գրավոր, ինքնուրույն, գործնական, խմբային, համագործակցային, քննարկում, բանավեճ և կիսամյակային ամփոփիչ աշխատանքներ:

Առաջադրանքների կիրառումն իրականացվում է երեք եղանակով՝ բանավոր, գրավոր և գործնական: Ստուգման միջոցները պետք է լինեն հավաստի և հուսալի:

Միավորային գնահատման իրագործման ընդունված տեսակները

Սովորողների ուսումնառության ընթացիկ արդյունքները միավորային գնահատմամբ ամրագրելու համար գործածության մեջ են ստուգման հետևյալ տեսակները՝

1. բանավոր հարցում,
2. գործնական աշխատանք,
3. թեմատիկ գրավոր աշխատանք,
4. կիսամյակային ամփոփիչ աշխատանք:

Միավորային գնահատումն աշակերտի ուսումնական ձեռքբերումների նիշային կամ թվային արտահայտությունն է, որի միջոցով պատկերացում է կազմվում կրթական պահանջներին աշակերտի համապատասխանության աստիճանի մասին:

Բանավոր հարցում

Սա գնահատման մի տեսակ է, որի ժամանակ աշակերտը բանավոր խոսքով ներկայացնում է յուրացրած ուսումնական նյութը: Բանավոր հարցման հիմնական առավելությունն այն է, որ դրանով ստուգվում են սովորողի ոչ միայն մտապահման ու վերարտադրման ընդունակությունները, այլ նաև նյութի գիտակցված ընկալման մակարդակը: Բանավոր հարցման միջոցով պարզվում են սովորողի ձեռքբերումները հետևյալ ուղղություններով.

- բանավոր խոսք,
- վերարտադրություն,
- հաղորդակցություն,
- համագործակցություն,
- լեզվամտածողություն,
- գիտիլիքի յուրացում,
- տրամաբանություն,
- ստեղծագործական մտածողություն:

Բանավոր հարցումը կարելի է իրականացնել ՝ առանձին կամ գրատախտակի մոտ հարցման միջոցով, տնային աշխատանքների ստուգմամբ, համագործակցային տեխնոլոգիաների կիրառմամբ:

Բանավոր հարցումը կարելի է գնահատել հետևյալ հիմնական չափանիշներով.

1. ակադեմիական գիտելիքի իմացություն,
2. կիրառելի կարողություն,
3. ներկայացնելու կարողություն,
4. ինքնուրույն աշխատելու և ստեղծագործելու կարողություն,
5. միջառարկայական կապեր տեսնելու կարողություն:

Գործնական աշխատանք և կիրառություններ

Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր նպատակներից մեկն է՝ աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս: Գործնական կարող ենք համարել այն աշխատանքները, որոնց կատարման համար թուղթ ու գրիչից բացի օգտագործվում են նաև այլ միջոցներ: Գործնական աշխատանքներ են ուսումնական փորձերն ու լաբորատոր աշխատանքները: Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

- ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ,
- մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ,
- նպաստել անհատի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը և կրթության շարունակականության ապահովմանն ուղղված հմտությունների զարգացմանը:

Գործնական աշխատանքները հիմնականում անցկացվում են 2 ձևով: Առաջին՝ աշակերտը դասընկերների ներկայությամբ կատարում է որոշակի գործնական առաջադրանք, որն ուղեկցվում է բացատրություններով: Մյուս աշակերտները հետևում են բացատրությանը և անհրաժեշտության դեպքում, կատարում համապատասխան շտկումներ կամ մեկնաբանություններ: Երկրորդ՝ սովորողների կարողությունների ու հմտությունների ստուգումը կատարվում է միաժամանակ՝ յուրաքանչյուր աշակերտին տալով անհատական կամ **տարբերակված առաջադրանք: Գործնական աշխատանքները գնահատելիս հաշվի են առնվում.**

- տրված գործնական առաջադրանքին բնորոշ ընդհանրացումների, գաղափարների ու փաստերի ըմբռնման աստիճանը,
- նորովի կամ ստեղծագործական մոտեցումը,
- առաջադրանքի համար անհրաժեշտ հաշվարկներ կատարելու կարողությունը,
- գործողությունների արդյունքները վերլուծելու և հաղորդելու կարողությունը:

Գործնական աշխատանքի օրինակ

Թեմա – Եղանակի վերլուծություն

Խնդիրները

- տվյալներ հավաքելու և աղյուսակով ներկայացնելու կարողություն ձևավորել,
- ճանաչողական կարողությունները զարգացնել,
- լսածը ճիշտ գրառելու կարողությունը զարգացնել,
- աղյուսակ կարդալու կարողությունը զարգացնել:

Տևողությունը՝ 10 րոպե










Նախապատրաստումը (անհրաժեշտ նյութերը)

Թուղթ, քանոն, մատիտ, գրիչ, աղյուսակով պատահառ և (Ա3 չափի թուղթ):

Ընթացքը

1. Աշակերտներին նախօրոք հանձնարարում ենք համացանցից կամ հեռուստատեսությամբ տրվող «Եղանակի տեսություն» հաղորդումներից իմանալ որևէ 5 քաղաքում առաջիկա 2 օրում սպասվող օդի ջերմաստիճանը (ցերեկը կամ գիշերը), և տվյալները բերել դասարան:

2. Առաջարկում ենք տվյալներն աղյուսակով ներկայացնել:

h	քաղաքի անունը	ջերմաստիճանը I օրը	ջերմաստիճանը II օրը
1.	Գյումրի	22° C 	18°C 
2.	Երևան	31° C 	22°C 
3.	Սևան	23° C 	17°C 
4.	Գորիս	30° C 	23°C 
5.	Արարատ	34° C 	26°C 

Անդրադարձ

- Այս աշխատանքում ի՞նչն էր հետաքրքիր:
- Ինչու՞ այդ քաղաքներն ընտրեցիր:
- Քո ընտրած քաղաքներից որտե՞ր է գրանցվել (կամ դիտվել) ամենացածր ջերմաստիճանը, որտեղ՝ ամենաբարձրը:
- Ինչպե՞ս գրեցիր այդ քաղաքների անունները:
- Ի՞նչ քաղաքներ է ընտրել ընկերդ: Համեմատել աղյուսակները:

Հուշում / մեթոդական լրացուցիչ առաջարկներ /

- Աղյուսակները կարելի է խնդիրներ կազմելիս, լուծելիս օգտագործել:
- Օդի ջերմաստիճանի մասին տվյալները կարող եք նաև ջերմաչափի մոդելի վրա նշել:

Թեմատիկ աշխատանք

Թեմատիկ գրավոր աշխատանքն միավորային գնահատման մի տեսակ է, որի իրականացման ընթացքում սովորողն իր ուսանած ուսումնական նյութը ներկայացնում է գրավոր: Թեմատիկ գրավոր աշխատանքում պետք է ընդգրկվեն սովորողներին ներկայացվող չափորոշիչային պահանջներին համապատասխան առաջադրանքներ՝ դրանց յուրացման մակարդակը բացահայտելու նպատակով: Կախված ուսումնական առարկայից և թեմայից՝ թեմատիկ աշխատանքը կարող է լինել և բանավոր կամ գործնական: Առաջադրանքները կարող են տրվել թեստերով որոնցում ներառված են տարաբնույթ առաջադրանքներ.

- ճիշտ պատասխանի ընտրությամբ,
- կարճ պատասխան պահանջող,
- գործնական, կիրառական նշանակություն ունեցող,
- կառուցվածքի փոփոխություն պահանջող,
- գծապատկերի կազմման պահանջով,
- բաց թողածը լրացնելու պահանջով,
- ապացուցում պահանջող,
- ստեղծագործական մոտեցում պահանջող:

Թեմատիկ գրավոր աշխատանքներում պետք է ներառվեն 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ, որոնք պահանջում են նյութի խորքային յուրացում: Այդ գրավոր աշխատանքները գնահատվում են տաս միավորային համակարգով:

Կարևոր են նաև կարճաժամկետ գրավոր աշխատանքները, որոնց տրման նպատակն է որոշել ուսումնասիրված թեմաներից սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ու դրա հիման վրա կատարել եզրահանգումներ և պլանավորել անհրաժեշտ քայլեր:

Հատկորոշիչներ

Ուսումնական առարկան	Մաթեմատիկա
Հարցարանի համարը	1
Հարցարանի տարատեսակը	Թեմատիկ գրավոր աշխատանք
Դասարանը	3-րդ
Ծրագրային թեման	Եռանիշ թվեր: Դրանց համեմատումը, ներկայացումը Կարգային գումարելիների գումարի տեսքով: Գումարում և հանում եռանիշ թվերով:
Հարցարանի առավելագույն միավորը	23
Նախատեսված ժամանակը	40-45 րոպե

Գնահատման չափանիշների միավորային աղյուսակ

Առաջադրանքի համարը	Առաջադրանքի առավելագույն միավորը	Գնահատման քայլի միավորը
1	3	1
2	4	1
3	4	1
4	3	1
5	3	1
6	1	1
7	3	1
8	2	2

Թեմատիկ գրավոր աշխատանք

1. Գրի՛ր այն թվերը, որոնք պարունակում են.

ա) 5 հ. 6 տ. 9 մ. =

4 հ. 1 տ. 3 մ. =

բ) 463 թիվը ներկայացրո՛ւ կարգային գումարելիների գումարի տեսքով:

2. Գտի՛ր անհայտ բաղադրիչը և կատարի՛ր ստուգում:

+ 127 = 400

320 - = 20

3. Օրինակները գրի՛ր «սյունակով» և հաշվի՛ր.

527 + 148 =

496 + 237 =

841 - 352 =

987 - 699 =

4. Համեմատի՛ր. (<, >, =)

278 . . . 342

462 . . . 406

954 . . . 938

5. Հաշվի՛ր արտահայտության արժեքը.

(887 - 879) . 6 + 12

6. Նշի՛ր այն տողը, որի բոլոր գրառումները ճիշտ են.

ա) 1 մ = 10 դմ, 1 մ = 100 սմ, 1 դմ = 100 սմ

բ) 1 մ = 10 դմ, 1 մ = 10 սմ, 1 դմ = 10 սմ

գ) 1 մ = 10 դմ, 1 մ = 100 սմ, 1 դմ = 10 սմ

7. Համառոտագրի՛ր խնդիրը և լուծի՛ր.

Առաջին օրը ցուցահանդես հաճախեց 212 մարդ, իսկ երկրորդ օրը՝ 118 մարդ պակաս: Ընդամենը քանի՞ մարդ հաճախեց ցուցահանդես այդ երկու օրում:

8. Ընտրի՛ր ճիշտ պատասխանը և ընդգծի՛ր.

Տղան իր մտապահած թիվը մեծացրեց 8-ով, արդյունքը փոքրացրեց 4 անգամ և ստացավ 6 : Ի՞նչ թիվ էր մտապահել տղան:

ա) 24

բ) 16

գ) 8

Կիսամյակային ամփոփիչ աշխատանք

Կիսամյակային ամփոփիչ աշխատանքի նպատակն է պարզել կիսամյակի ընթացքում աշակերտի ձեռք բերած գիտելիքի և կրթության բովանդակության «կարողություններ և հմտություններ» բաղադրիչի մակարադկը, ինչպես նաև պարզել կիսամյակի վերջում աշակերտի մնացորդային գիտելիքը:

Կիսամյակային ամփոփիչ աշխատանքը կարող է իրագործվել բանավոր հարցման, գրավոր աշխատանքի կամ գործնական աշխատանքի միջոցով: Հարցման ձևը որոշում են առարկայական մասնագետներն ու տնօրինությունը: Այս գրավոր աշխատանքին տրվող ժամանակը որոշվում է՝ կախված ուսումնական առարկայից: Աշխատանքին տրվող ժամանակը պետք է համապատասխանի թեստի առաջադրանքները կատարելու աշակերտի հնարավորություններին: Թեստը պետք է ապահովի աշակերտի առավելագույն, և չափորոշիչային նվազագույն գիտելիքներ ունեցող աշակերտի՝ անցումային, միավոր ստանալու հնարավորությունը: Թեստի յուրաքանչյուր առաջադրանքի կատարման համար տրվում է առանձին միավոր, նշվում է գնահատման քայլը: Թեստի առաջադրանքների կատարման համար տրվող գումարային առավելագույն միավորը կարող է տարբեր լինել 10-ից: Կիսամյակային ամփոփիչ աշխատանքից աշակերտի ստացած վերջնական միավորը մոտարկվում (կլորացվում) է ամբողջ թվով, եթե այն ամբողջ չէ:

Կիսամյակային ու տարեկան գնահատականների ձևավորումը

Սովորողի կիսամյակային առաջադիմության գնահատականը ձևավորվում է ստուգման 4 տեսակներից վաստակած գնահատականների հիման վրա: Վերջնական գնահատականը 10 միավորային սանդղակով հաշվարկելու համար գործածվում է հետևյալ բանաձևը՝

$$ԿԳ = Բ + Գ + Թ + Կ$$

ԿԳ – կիսամյակային գնահատական

Բ – բանավոր հարցում

Գ – գործնական աշխատանք

Թ – թեմատիկ գրավոր աշխատանք

Կ – կիսամյակային ամփոփիչ աշխատանք

Կիսամյակի վերջում, գնահատման յուրաքանչյուր բաղադրիչին համապատասխանող սյունակում նշանակվում է տվյալ բաղադրիչից աշակերտի ստացած գնահատականների

թվաբանական միջինը:

Տարեկան գնահատականը 2 կիսամյակային գնահատականների միջին թվաբանականն է: Եթե այն ամբողջ թիվ չէ, ապա որպես տարեկան գնահատական նշանակվում է այդ թվին անմիջապես հաջորդող ամբողջ թիվը, եթե 2-րդ կիսամյակային գնահատականը մեծ է առաջինից, հակառակ դեպքում՝ այդ թվին անմիջապես նախորդող ամբողջ թիվը:

Կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանք

1. Գրի՛ր այն թվերը, որոնք պարունակում են.

ա) 6 հ. 6 տ. 1 մ. =

6 հ. 4 մ. =

5 հ. 3 տ. 0 մ. =

9 հ. 4 տ. 1 մ. =

բ) 521 և 903 թվերը ներկայացրո՛ւ կարգային գումարելիների գումարի տեսքով:

.....
.....
.....

.....
.....
.....

2. Կատարի՛ր գործողությունները.

225	856	910	363
+	+	-	-
546	116	244	127
<hr/>	<hr/>	<hr/>	<hr/>

3. Հաշվի՛ր .

3 . 20 = 150 : 30 = 60 . 4 =
400 : 80 = 70 . 3 = 420 : 6 =

4. Հաշվի՛ր արտահայտության արժեքը .

420 : (360 : 6) + 37 =

5. Համեմատի՛ր . (>, <, =)

120 ր ... 3 ժ 2 օր . . . 60 ժ
90 դմ . . . 4 դմ 5 սմ 6 մ . . . 5 մ 8 սմ

6. Գտի՛ր անհայտ բաղադրիչը .

$$40 \cdot \square = 320$$

$$\square \cdot 20 = 80$$

$$560 : \square = 80$$

$$\square : 90 = 9$$

7. Գծիր ուղղանկյուն, որի մի կողմի երկարությունը 3 սմ է, իսկ մյուսինը՝ 2 անգամ ավելի: Հաշվիր այդ ուղղանկյան պարագիծը:

8. Համառոտագրիր խնդիրը և լուծիր .

Տղան 5 թուղթում անցավ 500 մ: Քանի՞ կիլոմետր նա կանցնի 1 ժամում, եթե յուրաքանչյուր թուղթում անցնում է հավասար հեռավորություն

9. Կռահիր այն օրինաչափությունը, որի հիման վրա կազմված է աղյուսակը, և լրացրո՛ւ դատարկ վանդակները.

7	3		8			6
5	1	3		7	2	
2	2	2	2			

Հատկորոշիչներ

Ուսումնական առարկան
Հարցարանի տարատեսակը
Դասարանը
Ծրագրային թեման
Առաջադրանքների քանակը
Հարցարանի առավելագույն միավորը
Նախատեսված ժամանակը

Մաթեմատիկա
Կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանք
3-րդ
1-ին կիսամյակի ծրագրային նյութի շուրջ
9
35
80-90 թուղթ

Գնահատման չափանիշների միավորային աղյուսակ

Առաջադրանքի համարը	Առաջադրանքի առավելագույն միավորը	Գնահատման քայլի միավորը
1	6	1
2	4	1
3	6	1
4	3	1
5	4	1

6	4	1
7	3	1
8	3	1
9	2	2

Ուսուցանող գնահատում

Առավել արդիական է դառնում գնահատումն օգտագործել ոչ միայն որպես ուսուցման արդյունքների ստուգման, այլ նաև որպես ուսուցումը բարելավելու միջոց:

Ուսուցանող գնահատումը սովորողի կրթական առաջընթացի նպատակով դասավանդման և ուսումնառության ընթացքին զուգակցվող որակական աշխատանքներն են: Ուսուցանող գնահատման նպատակն է՝ ճշգրտել դասավանդվող նյութի բովանդակությունը, ծավալը, խորությունը, դասավանդման արդյունավետ մեթոդները, շարունակաբար բացահայտել ուսումնական նյութի յուրացման տարրապատկերը:

Ուսուցանող գնահատումը հնարավորություն է տալիս ուսուցչին պարզել ուսումնական գործընթացում յուրաքանչյուր աշակերտի, խմբի, դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները, և իրավիճակի վերլուծությունից հետո մշակել գործողությունների հետագա քայլերը՝ յուրաքանչյուր սովորողի, դասարանի ընթացիկ առաջադիմությունը բարելավելու նպատակով: Գնահատման այս ձևի առանձնահատկություններից են հետադարձ կապի առկայությունը, որը տանում է ծագած թերությունները շտկող գործողությունների: Այդ դեպքում սովորողը համեմատվում է հիմնականում ինքն իր հետ՝ պարզելով իր առաջընթացը:

Սովորողներն ուսուցչի օգնությամբ, ինքնագնահատմամբ ու փոխադարձ գնահատումների միջոցով պարզում են տվյալ ուսումնական նյութի յուրաքանչյուր քայլի յուրացման աստիճանը և իրենց յուրաքանչյուրի առաջադիմության իրական պատկերը:

Ուսուցանող գնահատման արդյունքների հիման վրա, հետադարձ կապով, ուսուցիչը գնահատում է պետական չափորոշիչների, դասավանդման ծրագրերի և մեթոդների արդյունավետությունը: Ուսուցանող գնահատման դեպքում օգտագործվում են՝ ոչ թե թվանշանային կամ այլ սիշային գնահատումը, այլ աշակերտի առաջընթացը բնութագրող որակումներ և մեկնաբանություններ: Ուսուցանող գնահատման եռությունը հնարավոր բոլոր ձևերով սովորելուն աջակցելն է: Ձևավորող գնահատումն ուսուցանող գնահատման ենթամաս է, որի բնութագիրն ուսումնական նյութը յուրացնելու ընթացքում աշակերտի

թույլ տված թերըմբռնումներն ու սխալները հայտաբերելը և դրանք վերացնելն է: Ուսուցանող գնահատման իրականացման նպատակով կարելի է օգտագործել աշխատանքների հետևյալ ձևերը՝

- կարճ ժամանակի համար նախատեսվող առաջադրանք,
- բանավոր հարցում,
- խմբային աշխատանք, համագործակցություն, նախագիծ,
- բաց հարցերով քննարկում,
- ինքնագնահատում,
- գործնական աշխատանք, կիրառություններ,
- ռեֆերատ

Արդունավետ ուսուցման համար կարևոր է աշակերտներին քաջատեղյակ դարձնել ուսուցման նպատակներին, հստակ ներկայացնել դրանց հասնելու քայլերը: Պակաս կարևոր չէ նաև աշակերտի գիտակցությանը հասու դարձնել, որ իր ուսումնական ձեռքբերումների համար ինքն էլ է պատասխանատու: Այդ ամենը կհամարվի հաջողված եթե աշակերտի մոտ առաջանան հետևյալ հարցերը.

- ո՞րն է իմ ուսումնական մոտակա նպատակը ,
- այդ նպատակին հասնելու ճանապարհին ի՞նչ ձեռքբերումներ ունեմ,
- այդ նպատակն իրականացնելու համար ի՞նչ պետք է անեմ

Ուսուցանող աշխատանքների ձևեր ու տեսակներ

1. *Կարճ ժամանակի համար նախատեսվող առաջադրանք*

Այս առաջադրանքի նպատակն է՝ պարզել ենթաթեմայի, նոր գաղափարի և ուսումնական առարկայի փոքր մասերի տիրապետման աստիճանը: Այս տիպի առաջադրանքները կարող են լինել տարբեր տեսակների և դրանք կարելի է կիրառել՝ կախված ուսումնական առարկայի առանձնահատկություններից, թեմայից և նպատակից: Այդպիսիք են թելադրությունն ու շարադրությունը, թեստը, գործնական աշխատանքը, պատրաստի գծագրերով առաջադրանքի կատարումը, համառոտագրումը:

2. *Բանավոր հարցում*

Բանավոր հարցումն օգնում է ուսուցչին բացահայտելու, թե աշակերտն ինչ կարող է անել: Բանավոր հարցման դեպքում պետք է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքներին.

- հարցերն օգտագործել՝ բացահայտելու նպատակով, թե ինչ գիտի աշակերտը, ինչպես է հասկանում և ինչ կարող է անել,
- վերլուծել աշակերտի պատասխաններն ու հարցերը, որպեսզի բացահայտվի թե ինչ գիտի աշակերտը, ինչպես է հասկանում և ինչ կարող է անել
- հարցերն օգտագործվեն՝ աշակերտների հատկանշական թերըմբռնումները պարզելու և հետագա ուսուցումը բարելավելու համար

- աշակերտի հարցերն օգտագործվեն նրան ըմբռնողունակությունը գնահատելու նպատակով

Օրինակ, ենթադրենք ուսուցիչը փորձում է պարզել, թե աշակերտն ինչքանով գիտի պարզ թվերի սահմանումն ու հատկությունը (պարզ են կոչվում 1-ից մեծ այն բնական թվերը, որոնք բաժանվում են միայն 1-ի և իրենց վրա):

Ուսուցիչը հարցնում է «Պա՞րզ է արդյոք 17 թիվը»: Աշակերտներից մեկը անվստահ ասում է՝ «այո» և հետո շարունակում՝ «կարծես թե ոչ»: Հարցադրման այս ձևը հնարավորություն չի տալիս ուսուցչին հետևություն անել, թե տվյալ աշակերտը գիտի՞, արդյոք, պարզ թվերի հատկությունը, թե՛ ոչ: Փոխելով հարցադրման ձևը՝ «Ինչու՞ է 17-ը պարզ թիվ», կունենանք մի շարք օգտակար ազդակներ՝

- դա կօգնի աշակերտին վերհիշել պարզ թվերի սահմանումը և 17 թվի բաժանարարների որոշումը: Այդպիսով, նա կըմբռնի, թե ինչու է 17-ը պարզ թիվ,
- դա աշակերտին կհուշի բացահայտել պարզ թվերի մասին իր գիտելիքը և այն օգտագործել՝ իր պատասխանը հիմնավորելու համար,
- աշակերտը ձևակերպում է հիմնավորված և հասկանալի պատասխան, այն է՝ **«Այո, քանի որ պարզ թվերը մեծ են 1-ից և ունեն միայն 2 բաժանարար, իսկ 17-ը 1-ից մեծ է և ունի ճիշտ 2 բաժանարար»**,
- այդ պատասխանը լիարժեք է աշակերտի դրսևվորած գիտելիքը ճիշտ գնահատելու համար, մինչդեռ առաջին դեպքում անհրաժեշտ կլինեին լրացուցիչ հարցեր:

Կարելի է կազմել արդյունավետ հարցադրումների տեսակների աղյուսակ և օգտագործել: Օրինակ՝

- ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ . . . ,
- ի՞նչն է նույնը և ի՞նչն է տարբեր . . . ,
- ինչպե՞ս կբացատրեք . . . ,
- ի՞նչն է սխալ . . . ,
- ինչու՞ է ճիշտ . . . , և այլն:

Բանավոր հարցման միջոցով կարելի է պարզել ուսուցված թեմայի կամ քննարկման ենթակա նյութի տիրապետման աստիճանը: Պարզվում են սովորողների լեզվամտածողությունը, հաղորդակցվելու կարողությունը, տրամաբանությունը և արագ կողմնորոշվելու հատկությունը:

Ներկայացնում են բանավոր հարցման ժամանակ օգտագործվող անհատական քարտերի նմուշօրինակներ.

Քարտ 1.

3-րդ դասարան

Թեման – Հնգանիշ և վեցանիշ թվեր

1. Կարդա՛ր տրված թվերը.
7984, 18 207, 298 016, 128 005
2. Հետևյալ թվերը գրի՛ր թվանշաններով.
ա) Երեք հարյուր հիսունչորս հազար տասնութ
բ) Վեց հարյուր հազար վաթսունչորս
3. Ընտրի՛ր և կարդա՛ այն գրառումը, որը ճիշտ ներկայացնում է 28043 թվի կարգային գումարելիների գումարը.
ա) $20000 + 8000 + 400 + 30$
բ) $28000 + 40 + 3$
գ) $20000 + 8000 + 40 + 3$
4. Ասա ամենամեծ հնգանիշ և ամենափոքր վեցանիշ թիվը:

3. **Տնային աշխատանք**

Սովորելը խթանելու արժեքավոր միջոց է տնային աշխատանքների դերի բարձրանցումն ու դրանց նկատմամբ մոտեցումների ճշգրտումն ու համակարգումը: Աշակերտի կրթության համար տնային աշխատանքին կարևոր դեր է հատկացվում: Դպրոցներն ու կրթության կազմակերպման այլ ձևերը չեն կարող լիարժեք ապահովել դասապրոցեսից հետո սովորողի ուսումնառության շարունակությունը դպրոցում: Աշակերտն իր անհատական կամ համագործակցային աշխատանքները կատարելու է նաև տանը: Ուսուցիչը դասի ընթացքում կամ դրանից դուրս պետք է կարողանա ստուգել և աշակերտի հետ վերլուծել տնային աշխատանքներում աշակերտի ցուցաբերած առաջընթացն ու թերությունները: Տնային հանձնարարությունները պետք է լինեն այնպիսի ծավալի, որ դրանց կատարման համար աշակերտը ծախսի միջին հաշվով շաբաթական ժամաքանակի կեսից ոչ ավելին: Տնային աշխատանքը նպաստում է սովորողի ինքնուրույն և խմբային աշխատանք կատարելու կարողության զարգացմանը: Տնային աշխատանքների ստուգումը, քննարկումն ու վերլուծությունը պետք է արվեն հնարավորինս հաճախ, քանի որ դա կօգնի աշակերտին լավ յուրացնել տվյալ ուսումնական նյութը և հետագայում ինքնուրույն վերացնել ի հայտ եկած թերությունները:

4. **Ինքնուրույն կատարման համար ուսումնական առաջադրանք՝ տանը և դպրոցում**

Այս առաջադրանքի նպատակն է՝ պարզել աշակերտի անհատական աշխատանք կատարելու կարողությունը, առարկային տիրապետելու մակարդակն, հետազոտական-

վերլուծական ունակություն և գրականությունից օգտվելու կարողությունը: Ինքնուրույն աշխատելու համար աշակերտին կարելի է հանձնարարել որոշակի առաջադրանք՝ գործնական, ռեֆերատ և ստեղծագործական աշխատանք:

5. Ըննարկում՝ բաց հարցերի միջոցով

Բաց են կոչվում այն հարցերը, որոնք մեր ունեցած գիտելիքով չունեն միարժեք պատասխան: Բաց հարցերով քննարկումների նպատակն է՝ աշակերտին ներգրավել առաջադրված հարցի պատասխանի շուրջ ծավալվող քննարկումների մեջ: Ի տարբերություն փակ հարցերի, որոնք ունեն միարժեք պատասխան, բաց հարցերը միարժեք պատասխան չունեն: Այստեղ ի հայտ են գալիս մտքի խորությունը, տեղեկացվածությունը, ընդհանուր զարգացվածությունը: Բաց հարցերով քննարկումների թեմաներ կարող են լինել ազգային, մշակութային, հոգևոր զարգացման և ճիշտ արժեքային համակարգ ձևավորող առաջադրանքները: Բաց հարցեր առաջարկում է ուսուցիչը կամ աշակերտը:

Բաց հարցերի օրինակներ.

- որո՞նք են Արցախյան 44-օրյա պատերազմի պարտության պատճառները.
- գիտենալով բազմակյունների նմանությունը՝ փորձեք գտնել քառանկյունների համար նմանության հայտանիշներ:

Այսպիսի հարցերի քննարկումները կնպաստեն աշակերտի վերլուծական և տրամաբանական մտածողության զարգացմանը: Այդ քննարկումները կարելի է կազմակերպել դասի ընթացքում կամ դրանից դուրս՝ կախված առաջադրվող հարցի ակնկալվող պատասխանից:

6. Համագործակցային աշխատանք

Համագործակցային կամ խմբային աշխատանքը հնարավորություն է տալիս աշակերտներին աշխատել խմբերով՝ բացահայտելու և դրսևորելու իրենց անհատականությունը, համատեղ աշխատանքին մասնակցելու ունակություն և համագործակցելու կարողությունը: Ուսումնական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է սովորեցնել սովորել: Համագործակցային ուսուցման դիպուկ բանաձև է Սենեկայի այն միտքը, որ սովորեցնողը սովորում է կրկնակի: Այդ պարագայում, սովորողը երկու դեպքում էլ շահում է. երբ լսում և սովորում է ուրիշից, ինչպես նաև երբ սովորեցնում է ուրիշին: Համագործակցային աշխատանքում պետք է մասնակցեն խմբի բոլոր անդամները, և յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ ընդհանուրի հաջողությունը պայմանավորված է իր մասնակցությամբ իսկ իր հաջողությունը՝ մյուսների: Այդ աշխատանքներից ավելի շատ օգտվում են թույլ աշակերտները, բայց ուժեղներն էլ կշահեն՝ հիմնականում սովորեցնելով:

Խմբային աշխատանքը նպաստում է աշակերտի սոցիալականացմանը, մտածողության ճկունացմանը, անձնական որոշ բարոյական արժեքները ազատվելուն, գիտելիքների տրամաբանական մտածողության դրսևորմանը և քաղաքացիական գիտակցության բարձրացմանը: Կարևոր է, որ աշխատանքի կազմակերպման հիմնական բաղադրիչը խմբի յուրաքանչյուր անդամի մասնակցության խթանումն է առաջադրանքի կատարման

ընթացքում: Դասի սկզբում ուսուցիչը հանգամանորեն պետք է ներկայացնի դասի նպատակը, պարզաբանի ուսումնասիրվող նյութի կապն արդեն ծանոթ գաղափարների հետ, որպեսզի աշակերտները պարզ ու հստակ պատկերացնեն, թե իրենցից ինչ է պահանջվում և թե ինչ նպատակների իրագործման են իրենք ձգտելու տրված ժամանակահատվածում: Աշխատանքն ավարտելուց հետո վերլուծվում և քննարկվում է աշխատանքի ընթացքը, և յուրաքանչյուր աշակերտի՝ մասնակցության և ներդրման չափը: Համագործակցային աշխատանքի ավարտից հետո ուսուցիչը կարող է նաև թեստ հանձնարարել, գնահատել և արդյունքները վերլուծելով պարզել յուրաքանչյուր խմբի աշխատանքի արդյունավետությունը:

7. Ինքնագնահատում

Աշակերտի կրթական առաջընթացի համար կարևոր հիմք են նրա ճիշտ պատկերացումներն ուսումնական նյութի իր իմացության մակարդակի ու սեփական ուժերով թերությունները վերացնելու կարողության մասին: Այդ նպատակներին է ծառայում ինքնագնահատման կանոնավոր կիրառումը:

- Որպես մտածող և սովորող՝ ինքնուրույն պարզելու իր գիտելիքի մակարդակը,
- առաջադրանքը հստակ պատկերացնելուն,
- փնտրելու սեփական ուսման որակը բարելավելու միջոցներ, և մշակելու դրանք:

Ինքնագնահատան նպատակն է ընդլայնել աշակերտի ճանաչողությունը, ինքնաճանաչումը, արժեքային համակարգի շրջանակները և պատասխանատվության գիտակցումը:

Առաջադրանքի վերլուծությունից հետո կարևոր է, որ աշակերտը տեսնի և հասկանա իր թերությունները և դրանց շտկման համար դրսևորի ձգտում, կարողություն ու կամք: Օրինակ, եթե ուսուցչի հետ միասին կարդում են շարադրությունը, և աշակերտը կարողանում է նկատել իր սխալներն ու թերությունները և ասել, թե այժմ ավելի ճիշտ ու լավ ինչպես կգրեր, դա կլինի ինքնագնահատման մի դրսևորում: Աշակերտն աստիճանաբար պետք է պատասխանատու դառնա իր սովորելու համար:

Ինքնագնահատումը սովորողից պահանջում են իր կատարած աշխատանքների նկատմամբ հետադարձ դատողություններ անելու կարողություն, որն արդյունավետ սովորելու համար կարևոր առանձնահատկություն է: Ինքնագնահատման գործում կարևոր դեր է վերապահված ուսուցչին: Նա պետք է օգնի աշակերտին հասկանալ, թե ինչին պետք է փորձի հասնել աշակերտը:

Ներկայացնենք այդպիսի սյունակաշարերի նմուշօրինակ

	Գրեթե միշտ	Հաճախ	Երբեմն	Հազվադեպ
Մասնակցություն թիմի աշխատանքներին	4	3	2	1
<ul style="list-style-type: none"> • Մասնակցել եմ քննարկումներին • Չգալի աշխատանք եմ կատարել 				

<ul style="list-style-type: none"> • Մյուսներին աշխատելու հնարավորություն եմ ստեղծել 				
Խմբային աշխատանք				
<ul style="list-style-type: none"> • Օգնել եմ պլանավորել առաջադրանքի կատարումը • Օգնել եմ պարզել և լուծել խնդիրները • Ամփոփել և հստակեցրել եմ հարցերը • Գովել եմ թիմակիցներիս ջանքերը • Եղել եմ հանդուրժող 				
Պատասխանատվություն				
<ul style="list-style-type: none"> • Դասերին ներկայացել եմ ժամանակին • Ներկայացել եմ անրիաժեշտ նյութերով 				

8. Փոխադարձ գնահատում

Փոխադարձ գնահատումն արվում է զույգերով կամ խմբերով աշխատանքի միջոցով: Այստեղ դրսևորվում է դասընկերոջ թույլ տված սխալները տեսնելու և ճիշտ պատասխանը հիմնավորելու կարողությունը, աշակերտի ճիշտ մտածողությունը, ուրիշին օգնելու պատրաստակամությունը: Փոխոդարձ գնահատումը ենթադրում է նաև աշակերտի ինքնահամեմատությունը դասընկերոջ հետ: Դա առաջընթացը խթանող հանգամանք է: Փոխադարձ գնահատում կարելի է անել տնային աշխատանքներով: Օրինակ, աշակերտներին հանձնարարվում է տանը գրել օրինակներ և պարզաբանել, թե ինչպես կյանքում կիրառել եռանկյունների նմանության վերաբերյալ գիտելիքը: Ուսուցիչը յուրաքանչյուր աշակերտի համար ընտրում է նրա աշխատանքն ստուգող այլ աշակերտ: Ստուգող աշակերտն իր զույգի աշխատաքը գնահատելիս պետք է քննարկի հետևյալ հարցերը.

- իմաստալի՞ց են, արդյոք, գրված պարզաբանումները,
- սպառի՞չ են դրանք,
- պարզ ու հասկանալի՞ են բերված օրինակները:

Այդ աշխատանքներն աշակերտից պահանջում են՝

- անձնական մեծ պատասխանատվություն,
- անդրադարձ սեփական ուսմանը,
- ճիշտ ինքնարժևորում և պատճառաբանվածություն:

9. Գործնական աշխատանք և կիրառություն

Աշակերտի ձեռք բերած գիտելիքները հիմնավոր և օգտակար են այնքանով, որքանով նա կարող է դրանք կիրառել: Այդ գիտելիքների կիրառությունների կարողությունը զարգացնելու նպատակով նախատեսվում են գործնական աշխատանքներ: Որոնք կարող են լինել տարբեր՝ տեղանքում կողմնորոշվելու, գործիքներով աշխատելու կարողություն, մոդելավորում և տեխնոլոգիաների յուրացում:

Գործնական աշխատանք **Թիրախ թիվը**

Խնդիրները

- Միանիշ թվերով թվային պարզ արտահայտությունների արժեքը հաշվելու հմտությունները զարգացնել:

Տևողությունը՝ 15-20 րոպե

Նախապատրաստումը (անհրաժեշտ նյութերը)

Պիտակավորված 2 արկղիկ (կամ անթափանց տուփ)՝ մեկը «միանիշ թվեր» պիտակով, մյուսը՝ «տասնյակներ» (առաջինում 1-9 թվերով քարտեր, երկրորդում՝ 10, 20, 30, 90 թվերով):

Դասասենյակի նախապատրաստումը

Սեղանները քառյակներով աշխատանքին հարմար դասավորեք:

Ընթացքը

1. Սովորողներին քառյակների բաժանեք:
2. Թող խմբերի ներկայացուցիչներից յուրաքանչյուրը միանիշ թվերի արկղից 3 պատահական թիվ հանի, իսկ մյուս արկղից՝ մեկը, թիրախ թիվը: (Հանած միանիշ թվերը խումբն արագ գրանցում է, քարտերը նորից արկղիկը գցում՝ մյուսների համար):
3. Խմբերին առաջարկեք այդ 3 միանիշ թվերի հետ թվաբանական գործողություններ կատարելով թիրախ թիվն ստանալ (ամեն թիվ միայն մեկ անգամ պիտի օգտագործեն, բոլոր հնարավոր տարբերակները գտնեն): Օրինակ՝ մի արկղիկից 3, 7, 1 միանիշ թվերը, իսկ մյուսից՝ 20-ը հանելու դեպքում՝ $3 \cdot 7 - 1 = 20$

Անդրադարձ

- Թիրախ թիվը քանի՞ տարբերակով կարողացաք ստանալ:
- Ովքե՞ր որևէ տարբերակ չեն գտել:

Սահմանում

Թեստը որոշակի նպատակով կազմված, Ուղղորդող ցուցումներով հարցերի շարք է, Սովորողներին գնահատելու և նրանց ուսումնական գործունեությունը արժևորելու համար:

Քիմնական նպատակները

1. Ընտրություն
2. Աշակերտի առաջադիմության արձանագրում
3. Հայտորոշում (սովորողի ուժեղ և թույլ կողմեր
4. Արժևորում
5. Հաշվետվություն

Թեստ

Տեսակները

1. Տեղակայման
2. Հայտորոշման
3. Ձեռքբերումների ստուգման
4. Ընդհանուր գիտելիքների ստուգման

Հատկորոշիչներ

1. Ո՞ր դասարանի համար է նախատեսված
2. Ի՞նչ նպատակ է հետապնդում
3. Թեստի գնահատման առավելագույն միավորը
4. Հատկացված ժամանակը
5. Գնահատման չափանիշների միավորային աղյուսակ

Եթե թեստը հարց է, ապա հարցը՝ առաջադրանքը կատարելու հանձնարարական է՝ համապատասխան ցուցումներով, որն ակնկալում է պատասխան: Պարտադիր չէ, որ հարցն ուղեկցվի հարցական նշանով, առաջադրանքի հանձնարարականը կարող է ձևակերպվել նաև որպես անավարտ նախադասություն, հրահանգ և այլն: Կարևոր է, որ պահանջը ձևակերպվի պարզ, հստակ և միանշանակ: Թեստը կիրառվում է.

- Սովորողի գիտելիքների և հմտությունների մակարդակը նախապես ստուգելու նպատակով:
- Ուսուցման և ուսումնառության գործընթացը հայտորոշելու ու բարելավելու նպատակով:
- Ընդհանուր գիտելիքների ստուգման՝ ընտրության նպատակով (մրցույթներ, օլիմպիադաներ. . .):
- Առարկայի չափորոշիչներով և համապատասխան ծրագրերով սահմանված գիտելիքների, հմտությունների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու նպատակով (թեմատիկ գրավոր և կիսամյակային ամփոփիչ աշխատանք):

Կախված նպատակից կիրառվում են տարբեր թեստեր: Իսկ տարբեր թեստեր ունեն գնահատման տարբեր առանձնահատկություններ:

Թեստերում ընդգրկվող առաջադրանքները հիմնականում լինում են հետևյալ տիպերի՝

- ընտրովի պատասխանով,
- կարճ պատասխանով,
- համապատասխանեցման առաջադրանք,
- բաց թողնվածը լրացնելու առաջադրանք:

Կարճ ժամանակի համար նախատեսվող թեստերի հիմնական առանձնահատկություններն են՝

- տևողությունը,
- հաճախությունը,
- ծրագրային ծավալը՝ պայմանավորված ենթաթեմայի կյուլթով,
- առաջադրանքների քանակը,
- առաջադրանքների բնույթը:

Թեստ կազմելիս շատ կարևոր է պարզ պատկերացնել այն ուսումնական նպատակը, որի համար այն նախատեսված է: Ուսումնական նպատակի մասին խոսելիս՝ տեղին է հիշել **Սենեկայի „Եթե մարդը չգիտի , թե դեպի որ նավահանգիստն է նավարկում, ապա նրա համար ոչ մի քամի էլ նպաստավոր չէ,“** ասացվածքը:

Թեստի միջոցով ստուգվում են սովորողի գիտելիքը, կարողությունները, հմտություններն ու արժեքային համակարգը: Թեստի նպատակն է՝ պարզել, թե աշակերտը որքանով է յուրացրել ուսումնական կյուլթը: Արդյունքներն օգտագործվում են միավորային գնահատման կամ հայտորոշման նպատակով: Ըստ նպատակի, ընթացիկ գնահատման թեստը կարող է լինել.

1. **առաջադիմության ստուգման** թեստ, որը տրվում է կիսամյակի, կամ յուրաքանչյուր թեմայի վերջում՝ ուսումնական նյութի յուրացման մակարդակը ստուգելու համար,
2. **հայտորոշիչ**, որը տրվում է պարբերաբար՝ հայտորոշելու սովորողների թույլ և ուժեղ կողմերը՝ հետագայում ուսուցումը բարելավելու նպատակով,
3. **տեղակայման** թեստ, որը տրվում է դասընթացի սկզբում՝ սովորողներին տեղակայելու՝ ըստ իրենց գիտելիքի և կարողությունների:
4. **Ընդհանուր գիտելիքի ստուգման** թեստը կազմվում է նախապես ստեղծված բնութագրիչների հիման վրա հատուկ ընտրված խմբի կողմից՝ հետազոտությունների ընտրություն կատարելու կամ վկայական տալու նպատակով, իսկ ընթացիկ գնահատման թեստը՝ ուսուցիչների կամ կենտրոնի կողմից և միտված է դասավանդման որակի բարելավմանը:

Յուրաքանչյուր թեստին կից պետք է մշակվեն գնահատման չափանիշներ: Կատարված աշխատանքի արդյունքներն ստուգվում են գնահատման կամ հետազոտման և ուսուցանման նպատակով: Թեստը պետք է լինի հավաստի, այսինքն, ստուգի այն գիտելիքը, կարողությունն ու հմտությունը, որը նախատեսված է: Թեստը պետք է լինի իրագործելի, արդյունավետ: Արդյունավետ թեստ նշանակում է՝ նվազագույն առաջադրանքների քանակով և ժամանակի ծախսով ապահովել առավելագույն արդյունք: Բովանդակության տեսակետից արդյունավետ է այն թեստը, որն ընդգրկում է ուսումնական ծրագրով նախատեսված հիմնական կարևոր նյութը՝ ամփոփ ներկայացված որպես ծրագրային պարտադիր միջուկ: Թեստը կիրառելուց առաջ, օգտակար կլինի հաշվի առնել սովորողի տարիքային առանձնահատկությունները: Թեստի արդյունքների գնահատումն աշակերտի համար ավելի օգտակար հետևանքներ կունենա, եթե նրան հայտնի լինի, թե ինչ սկզբունքով և ինչպես է ուսուցիչը գնահատելու իր կատարած աշխատանքը:

Թեստի արդյունքների գնահատումն աշակերտի համար ավելի օգտակար հետևանքներ կունենա, եթե նրան հայտնի լինի, թե ինչ սկզբունքով և ինչպես է ուսուցիչը գնահատելու իր կատարած աշխատանքը: Այդ խնդրի լուծման լավ ձևերից է գնահատման սանդղակը (ռուբրիկ, սանդղաշար, սյունաշար):

Չայտորոշում

Ուսուցման գործընթացի հաջողությունը պայմանավորված է ընթացիկ վիճակի ճիշտ հայտորոշմամբ: Չայտորոշման դերը բարձր է ուսումնական աշխատանքում, եթե որակյալ արդյունք է ակնկալվում: Չայտորոշման կարևորությունը մարդիկ հաճախ տեսնում և զգում են՝ հատկապես բժշկության ասպարեզում: Բժշկի գլխավոր խնդիրը հիվանդության ճիշտ փստորոշումն է, որից հետո, միայն, որոշվում է բուժման ճիշտ եղանակը:

Կրթության ոլորտում հայտորոշիչ ուսումնասիրման նպատակն է՝ պարզել դասավանդված ուսումնական նյութի կամ հմտության յուրացման գործում աշակերտի կամ ուսուցչի ձեռքբերումները, թերացումները, թերություններն ու սխալները: Չայտորոշման նպատակով կարելի է օգտագործել նաև բանավոր հարցումներ: Ուսուցանող գնահատման առաձևահատուկ տեսակ է հայտորոշիչ թեստը: Այն կարևոր է թե ուսուցչի և թե

աշակերտի համար, քանի որ դրա արդյունքների հիման վրա ուսուցիչը պարզում է իր ուսուցանելու որակն ու արդյունավետությունը, իսկ աշակերտն իր ուսումնառության կարողությունները: Դրա նպատակն է՝ որոշել, թե արդյո՞ք սովորողը պատրաստ է շարունակելու հետագա ուսումնառությունը:

Ընդհանուր բնույթի հայտորոշիչ թեստ

Մուտքային գրավոր աշխատանք

2-րդ դասարանի ծրագրային նյութի շուրջ

1. Հաշվի՛ր.

$$7 \cdot 5 \qquad 16 : 1$$

$$6 \cdot 9 \qquad 81 : 9$$

$$3 \cdot 6 \qquad 24 : 3$$

$$8 \cdot 0 \qquad 21 : 7$$

2. Հաշվի՛ր հարմար եղանակով.

$$48 \cdot 3 \qquad 56 : 4$$

$$96 \cdot 4 \qquad 84 : 7$$

3. Նշի՛ր գործողությունների կարգը ը հաշվի՛ր արտահայտության արժեքը.

$$23 \cdot 4 + 48 : 4$$

4. 2, 3, 8, 12, 15, 16, 24 թվերից օղակի մեջ վերցրու՛ այն թվերը, որոնք 3-ի բազմա-

պատիկներն են:

5. Արտահայտի՛ր.

ա) կիլոգրամներով՝ 5g

բ) սանտիմետրերով՝ 3մ 8սմ

գ) դեցիմետրերով՝ 4մ 2դմ

6. Խանութը ստացավ 24 արկղ խնձոր, իսկ ճաշարանը՝ 8 անգամ պակաս: Քանի՞ արկղ խնձոր ստացավ ճաշարանը:

7*. Փայտ սղոցելիս տղան օգնեց հորը: Յուրաքանչյուր գերան նրանք սղոցելով բաժանում էին 3 մասի: Մի սղոցումը նրանցից պահանջում է 5 րոպե: Որքա՞ն ժամանակում նրանք կսղոցեն 1 գերանը:

Թեստ

1. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը: (10 միավոր)

Երեմը և Էմինը հորե. . . բոր հետ գնացին Եղեգնաձոր: Նրանք ան. . . րկյուղ քայլում էին գետ. . . զր տանող ձորալանջի նեղ ճանապարհ. . . ով: Չա. . . իվայրով հոսում էր լեռնային պ. . . տոր գետը: Դա այդ վայրի ամենաերկար գետերից մեկն է: Եղիշե հորե. . . բայրն ուշադիր էր Երեմի ու Էմինի նկատմամբ: Երե. . . աները եր. . . ի առա. . . ին ան. . . ամ էին այդ վայրերում: (10 միավոր)

2. Կարդա՛ տեքստը և պատասխանի՛ր հետևյալ հարցերին: (1 միավոր)

Որտեղո՞վ է հոսում գետը: Պատ. `

3. Տեքստի ո՞ր բառն է նշանակում անվախ: (1 միավոր)

Պատ. `

4. Ո՞ր բառում ածանց չկա: (3 միավոր)

- բնություն
- մանրիկ
- այգի
- ձմեռային

5. ա. Ո՞ր բառն է ածանցավոր: (2 միավոր)

- ուշադիր
- լեռնային
- ձորալանջ
- վայր

բ. Տեքստից դուրս գրի՛ր ևս 1 ածանցավոր բառ:

Պատ. `

6. Ընդգծի՛ր տրված ածանցավոր բառերի ածանցները: Այդ բառերի իմաստն արտահայտի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)

քաղաքացի

.

բալենի

.

Գնահատման սանդղակ

Ռուբրիկ

Ռուբրիկ բառը ծագել է լատիներեն rubric (կարմիր կավ) բառից: Ժամանակին կարևոր բառերը գրվում էին կարմիր կավով: Մանկավարժական գրականության մեջ հաճախ է հանդիպում ռուբրիկ հասկացությունը, որի հայերեն համարժեքներն են գնահատման սանդղակը կամ սյունակաշարը: Ռուբրիկը գնահատման հնար է, ձև, որը սանդղակի միջոցով համադրում է սովորողների ըմբռնման որակը, հմտության աստիճանների տարբերակման չափանիշները և առաջադրանքների կատարման որակը: Ռուբրիկը կազմվում է այնպես, որ աշակերտը, առաջադրանք կատարելով, արդյունքում ստանում է որոշակի տեղեկություններ իր ուսումնառության մասին:

Ռուբրիկը օգնում է աշակերտին հասկանալ գնահատականի իմաստը, պատկերացում է տալիս տվյալ գնահատականի համար պահանջվող աշխատանքի մակարդակի մասին, ընդգծում է բացթողումները:

Գնահատման սանդղակները կարող են լինել ընդհանուր կամ որոշակի թեմայի համար: Ընդհանուր սանդղակը կարելի է որոշակիացնել յուրաքանչյուր առարկայի դասի, թեմատիկ աշխատանքի կամ առաջադրված այլ նպատակի համար:

Որոշակիացված սանդղակները վերաբերում են որևէ ուսումնական նյութի յուրացումն ստուգելու նպատակով կազմված թեստին կամ առաջադրանքին: Օրինակ՝ «Մակերեսներ» թեման անցնելուց հետո:

Դասի թեման՝ **Մակերես**

Յիմնավորում

- Թեմային համապատասխան (պետական ծրագրի և չափորոշչի սահմաններում) գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորում
- Աշակերտները կկարողանան գիտակցել այդ գիտելիքների կարևորությունը
- Աշակերտների մեջ կձևավորվի շրջապատող աշխարհը հասկանալու և գնահատելու կարողություն

Խնդիրներ և նպատակներ

- Հաշվել ուղղանկյան, քառակուսու մակերեսը

- Կատարել թվաբանական գործողություններ
- Լուծել խնդիրներ
- Կատարել չափումներ, կառուցումներ
- Աշխատել համագործակցային փոքր խմբերով

Գնահատում

- Ինքնաստուգման և խմբային աշխատանքի ստուգման սանդղակներ՝ նյութի յուրացումը և մտածողությունը ստուգելու նպատակով

Դիդակտիկ պարագաներ և ժամաբաշխում

- Մաթեմատիկական առաջադրանքներով քարտեր, գունավոր թղթեր, մկրատ, սոսիսձ
- **Դասի տևողությունը՝ 45 րոպե**

Միջառարկայական կապ

Ես և շրջակա աշխարհը /աշակերտներն ունեն հատակագիծ գծելու տարրական հմտություններ/

Տեխնոլոգիա

Խմբերի բաժանում /5 խումբ/

Խթանում

Աշակերտներին տրվում են ուշադրությունը կենտրոնացնող հարցեր՝ ուղղանկյան և քառակուսու մակերեսն ու պարագիծը հաշվելու վերաբերյալ:

Իմաստի րնկայում

ա. I մակարդակի առաջադրանք

Խմբերին բաժանվում են գունավոր թղթեր և համապատասխան գույնի առաջադրանքներով քարտեր: Յուրաքանչյուր խումբ պետք է կառուցի բնակարանի 1 սենյակը:

I խումբ

Չյուրասենյակ /կարմիր/
Երկարությունը գտնելու համար պետք է գտնել այն թիվը, որը ամենափոքր եռանկի թվից փոքր է 10 անգամ:
Լայնությունը գտնելու համար պետք է գտնել այն թիվը, որը ամենափոքր կլոր տասնյակի կեսն է:

II խումբ

Ննջասենյակ /կապույտ/
Երկարությունը ամենափոքր երկնիշ թիվն է:
Լայնությունը 20ից 5 անգամ փոքր թիվն է:

III խումբ

Խոհանոց /դեղին/

Երկարությունը 4-ի կրկնապատիկն է:

Լայնությունը 45-ի և 9-ի քանորդն է:

IV խումբ

Լողասենյակ /կանաչ/

Քառակուսի է, որի կողմի երկարությունը 2-ի այն բազմապատիկն է, որը փոքր է 6-ից, մեծ է 2-ից:

V խումբ

Գտնելով սենյակների երկարությունն ու լայնությունը՝ աշակերտները գունավոր թղթերի վրա գծում և կտրում են ուղղանկյուններն ու քառակուսիները: Հետո մեծադիր թղթի վրա կառուցում են բնակարանի հատակագիծը: Այստեղ հաղորդվում է մասշտաբի մասին որոշակի տեղեկատվություն՝ ընդունելով, որ 1սմ=1մ:

Միջանցք /սպիտակ/

Երկարությունը 9-ի և 2-ի

արտադրյալն է:

Լայնությունը 270-ի և 90-ի քանորդն

է:

Խոհանոց 5մ		Հյուրասենյակ 5մ	
8մ		10մ	
Միջանցք 18մ			
3մ			
Լողասենյակ 4մ	Ննջասենյակ 4մ		Պատշգամբ
10մ			

բ. II մակարդակի առաջադրանք

Յուրաքանչյուր խմբի հանձնարարվում է հաշվել համապատասխան սենյակի հատակի մակերեսը:

գ. III մակարդակի առաջադրանք

I խումբ Գտնել պատշգամբի հատակի մակերեսը և համեմատել լողասենյակի հատակի մակերեսի հետ:

II խումբ Հաշվել բնակարանի հատակի պարագիծը:

III խումբ Հաշվել բնակարանի հատակի մակերեսը:

IV խումբ Քանի՞ սալիկ է հարկավոր լողասենյակի հատակը սալիկապատելու համար, եթե 1մ քառակուսու համար պահանջվում է 4 սալիկ:

V խումբ Որքա՞ն ներկ է հարկավոր միջանցքի հատակը ներկելու համար, եթե 1մ քառ. համար անհրաժեշտ է 2լ ներկ:

Կշռադատում

Վե՞նի դիագրամ, գրել քառակուսու և ուղղանկյան առանձնահատկություններն ու նմանությունները՝ նշելով նաև պարագիծը և մակերեսը գտնելու հաշվեկանոնը:

քառակուսի

ուղղանկյուն

Ամփոփում

Անդրադառնալ բնակարանի հատակագծին. արդյոք այն հարմարավետ է:

Դասից հետո

Հանձնարարել աշակերտներին գծել իրենց բնակարանի հատակագիծը:

Հրահանգների քայլաշար /տրվում է յուրաքանչյուր խմբի/

- Ուշադիր կարդալ առաջադրանքները
- Քննարկել աշխատանքի ընթացքը խմբի անդամների հետ
- Ստուգել առաջադրանքները
- Հետևել հրահանգներին
- Տեղավորվել ժամանակի մեջ
- Ընդունել ընկերոջ կարծիքը
- Պատասխանատու լինել կատարած աշխատանքի համար

Ռուբրիկ /պատասխանել՝ այո, ոչ /

1	Կարողացել եմ կատարել թվաբանական գործողությունները	այո	ոչ
2	Ճիշտ եմ հասկացել հրահանգները		
3	Կարողացել եմ ճիշտ ընտրել խնդիրների լուծման եղանակները		
4	Կարողացել եմ կատարել կառուցումները		
5	Կարողանում եմ հաշվել քառակուսու և ուղղանկյան մակերեսը		
6	Կարողանում եմ հաշվել քառակուսու և ուղղանկյան պարագիծը		
7	Կարողանում եմ համագործակցել խմբի անդամների հետ		

Բանավոր զեկույցի գնահատման ռուբրիկ

h.	Հիմնական որակներ	Միավորների առավելագույն քանակ	Ինքնագնահատման արդյունքում տրված միավորներ	Ուսուցչի կողմից տրված միավորներ
1	Թեմայի ամբողջականություն և փաստարկվածություն	10		
2	Տրամաբանական կառուցվածք	10		
3	Պատկերավորություն	5		
4	Արդյունավետ ծավալ	5		
5	Խոսքի հստակություն, տեմպ	5		

6	Ճիշտ քերականություն	5	
7	Համապատասխան պահվածք	5	
8	Ընդամենը	45	

Ուսումնական թղթապանակ

Թղթապանակը աշակերտի ճանաչողական, ստեղծագործական աշխատանքի ինքնագնահատականն է, անդրադարձը՝ իր սեփական գործունեությանը:

Թղթապանակը սովորողի ուսումնական գործունեության արդյունքների և նմուշների կազմակերպման, ինչպես նաև արտաքին աղբյուրների, համապատասխան տեղեկատվական նյութերի հավաքածու է: Այն նախատեսված է սովորողի ուսումնական մակարդակի բազմակողմանի քանակական և որակական վերլուծության և նրա ուսումնական գործընթացի հետագա շտկման համար: Թղթապանակում ընդգրկված նյութերն արտացոլում են սովորողների ջանքերը, տարբեր բնագավառներում նրանց առաջընթացը և ձեռքբերումները: Թղթապանակը կրթական գործընթացում իրականացնում է հետևյալ գործառույթները .

Ախտորոշիչ: Արձանագրում է որոշակի ժամանակաընթացքում առկա առաջադիմությունը, որն էլ հնարավորություն է ընձեռում հետևելու աշակերտի կրթական աճին:

Նպատակադրում: Հետապնդում է կրթական նպատակներ, որոնք առաջադրված են չափորոշիչներով:

Դրդապատճառային: Խրախուսում է երեխաների, ուսուցիչների և ծնողների փոխհամագործակցությունը՝ դրական արդյունքների հասնելու համար:

Բովանդակային: Բացահայտում է ձեռքբերումներն ու կատարված աշխատանքները: Թղթապանակում ընդգրկված են տարբեր աշխատանքների և կրթական արդյունքների հավաքածուներ, որոնք ցույց են տալիս սովորողների ջանքերը, առաջադիմությունը և տարբեր առարկաներից ձեռքբերումները:

Չարգացնող: Ապահովում է դասարանից դասարան զարգացման, ուսուցման և կրթության շարունակականությունը:

Վարկանիշային: Ցույց է տալիս կարողությունների և հմտությունների մակարդակն ու շրջանակը:

Հաշվետվական: Այն ուսումնական գործընթացի յուրօրինակ հաշվետվություն է. ի՞նչ իմացավ երեխան, և ինչպես անցավ ուսուցման գործընթացը, ինչպես է նա մտածում, վերլուծում, համադրում, ստեղծում, բացահայտումներ կատարում, մտավոր, զգայական և սոցիալական մակարդակով ինչպես է համագործակցում իր հասակակիցների հետ և այլն: Թղթապանակի գնահատման ձևը որոշում է ուսուցիչն աշակերտների և ծնողների հետ: Թղթապանակը գնահատում է ուսուցիչը: Թղթապանակի շնորհանդեսի գնահատումը կատարվում է սանդղակների միջոցով: Սանդղակում կարող են տեղ գտնել հետևյալ ցուցանիշները .

- ներկայացվող նյութի նպատակների որոշում,

- ձեռքբերումների համառոտ և բովանդակալից ներկայացում,
- ներկայացման ինքնուրույնությունը,
- աշակերտի սեփական դիրքորոշման արտացոլում,
- կատարված դատողությունների տրամաբանվածությունը և խոսքի մշակույթը,
- թղթապանակի գեղագիտական ձևավորումը:

Ուսումնական թղթապանակը գնահատելիս կարևոր դեր են կատարում տվյալ առարկայի ուսուցման հիմնական նպատակն արտացոլող չափանիշները: Այդպիսի չափանիշներ են ճկունությունը, մտածողության յուրօրինակությունը, խնդիրներ լուծելու ձևավորված ունակությունը, գործնական խնդիրներ լուծելու, նոր տեխնոլոգիաներ կիրառելու, մաթեմատիկական գեկուցումներով հանդես գալու ունակությունը, դիագրամներ և աղյուսակներ կիրառելու ունակությունը:

Աշակերտը պետք է լիարժեք ըմբռնի ուսումնական թղթապանակի նպատակը: Ուսուցչի և աշակերտի համար կարևոր հարցերը պետք է ընդգրկեն.

- Ինչպե՞ս եմ ես ընտրում նյութերը:
- Ի՞նչ եմ սովորում այս դասարանում:
- Ինչպե՞ս եմ կազմակերպում և ներկայացնում իմ աշխատանքները:
- Ինչպե՞ս կարող եմ իմ թղթապանակը պահել և հարստացնել:

Եզրակացություն

Այսօր ուսուցիչներին համար ոչ միանշանակ և բարդ իրավիճակ է ստեղծվել: Մանկավարժական գիտության և իրականության մեջ լուրջ փոփոխություններ են տեղի ունենում: Այսօր իրավիճակը փոխվել է: Մեզ արդեն մատչելի են նոր տեխնոլոգիաները, տեղեկատվության բազմաթիվ աղբյուրները, սակայն տեղեկատվության այս բազմազանությունն էլ իր հերթին խնդիրներ է առաջ բերում: Նոր նպատակները փոփոխություններ են բերել նաև կրթության բովանդակության մեջ: Չարգացնելով նորը, առաջ քաշվեց նաև ուսուցման, ստուգման ու գնահատման նոր մեթոդների անհրաժեշտությունը: Ուսուցիչները ակտիվ մասնակցում են այս գործընթացին, անցկացվում են վերապատրաստումներ՝ մասնագիտական զարգացման համակարգի շրջանակներում, ներդրվում են նոր մեթոդներ ու տեղեկատվության հետ աշխատելու, նոր տեխնոլոգիաներից օգտվելու կարողություն: Պետք է ուսուցիչները անընդհատ զբաղվեն ինքնակրթությամբ, ինքնակատարելագործ-մամբ: Եվ այս ամենը կնպաստի ավելի որակյալ կրթության:

Այս ամենի հետ շատ կարևոր տեղ ունի գնահատումը: Կրթական գործընթացի ժամանակակից մոտեցումներում, որպես սկզբունք, նվազեցվում է միավորային կամ նիշային գնահատման վրա կենտրոնանալը՝ իօգուտ ուսուցանող աշխատանքների, գործնական աշխատանքների ու գիտելիքների կիրառությունների: Հետադարձ կապով նշվում են վերլուծություններից ստացված կարևոր արդյունքները և արվում հետևություններ՝ կապված ուսուցման ձևերի ու մեթոդների պետական չափորոշիչների, ծրագրային նյութերի և թեմատիկ պլանների վերանայման անհրաժեշտության հետ:

Այս ամենով, մենք՝ ուսուցիչներս արժևորում, դատողություններ ենք անում աշակերտի արածի և ձեռք բերածի արժեքային համակարգի մասին: Մեկ ուսումնական տարի հետո կորվի նոր գնահատման գործընթացը, որը իրենից ներկայացնում է ոչ միավորային գնահատում: Տարրական դպրոցում միավորային գնահատում չի իրականացվի, լինելու է բառային՝ բնութագրող:

Ես ինքս մասնակցել եմ «Քայլ առ քայլ», «Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում», «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» ծրագրերի և նաև մի շարք այլ վերապատրաստումների: Այս ամենը ինձ օգնում է ճիշտ կազմակերպել իմ աշխատանքը, քայլել ժամանակի հետ, ճիշտ հասկանալ նորամուծությունները և կիրառել իմ կրթական գործընթացում հոգուս աշակերտի:

Յետազոտությունը ճշմարտության որոնումն է, և դրա շուրջ ծավալված գործունեությունը պետք է լինի ազատ:

Գրականության ցանկ

1. Դասի պլանավորում և գնահատում /Զինի Լ. Սթիլ, Քուրթիս Ս. Մերեդիթ և Չարլզ Թեմիլ / Պատրաստված «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» ծրագրի համար:
2. Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան: Ուսուցչի ձեռնարկ /Օ. Ս. Միքայելյան, Ս. Օ. Միքայելյան / ՅՅԿԳ Կրթության ազգային ինստիտուտ, 2010թ. ԵՐԵՎԱՆ
3. Թեմատիկ և կիսամյակային գրավոր աշխատանքներ, Մաթեմատիկա 3, Ս. Սարգսյան, Մ. Մանուկյան, ԵՐԵՎԱՆ, «ԱՐԵՎԻԿ», 2010թ.
4. Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն, 2008 թ. ԵՐԵՎԱՆ
5. Մաթեմատիկայից գործնական աշխատանքներ, Գ. Բեդիրյան, Մ. Մանուկյան, Աստղիկ գրատուն, ԵՐԵՎԱՆ 2012թ.
6. Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար , Կրթության ազգային ինստիտուտի հրատ. , /Ա. Արնաուդյան,Ա. Գյուլբուդադյան,Ս. Խաչատրյան / unicef 2004թ. ԵՐԵՎԱՆ
7. Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը, Մելանյա Աստվածատրյան, Անահիտ Արնաուդյան, Իզաբելա Օհանովա, ԱՅՈՒԵԸՍ ԵՐԵՎԱՆ 2003թ.
8. 40 թեստ, Մայրենի 3, Մ. Հալաջյան, Ն. Մկրտչյան, Հեղինակային հրատարակություն, ԵՐԵՎԱՆ 2011թ.

9. 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար,
/Կ. Թորոսյան, Կ. Չիբուխյան / 2013թ. ԵՐԵՎԱՆ:Չանգակ

